Թափոնների կառավարման նորարարական փորձի ներածություն Վրաստանի, Մոլդովայի և Հայաստանի ընտրված քաղաքներում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ ՝	Շրջակա միջավայր
Տևողություն ՝	24 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	օգոստոս 2013 – օգոստոս 2015
Ընդհանուր բյուջե ՝	374,882 եվրո
ՀՀ շահառու հաստատություններ՝	Արարատի քաղաքապետարան, «Էկոլոգիական կենսակայունություն» ՀԿ
Մասնակից երկրներ՝	Վրաստան, Մոլդովա, Ռումինիա, Հայաստան

Ծրագրի նկարագրություն

Ընդհանուր նպատակը ՝ Աջակցել Սևծովյան ավազանի երկրների շրջակա միջավայրի և կյանքի որակի բարձրացմանը՝ թափոնների ժամանակակից կառավարման բնագավառում անդրսահմանային համագործակցության և գործընկերության խթանման միջոցով:

Հեռք բերված արդյունքները ՝

- Քութաիսի, Ունգենի և Արարատ քաղաքներում կազմակերպվել են գոյություն ունեցող թափոնների կառավարման փորձագիտական ուսումնասիրություններ և վերջինիս հիման վրա յուրաքանչյուր քաղաքի համար մշակվել է աղբի կառավարման գործողությունների ծրագիր,
- Կազմակերպվել է միջսահմանային սեմինար Ունգենի քաղաքում՝ թափոնների կառավարման Մոլդովայի փորձին ծանոթանալու նպատակով,
- Կազմակերպվել է ուսուցողական շրջայց դեպի Գալատի քաղաք (Ռումինիա)՝ քաղաքային թափոնների կառավարման փորձը կիսելու նպատակով,
- Հայաստանի ներկայացուցիչների համար կազմակերպվել է ուսուցողական ուղևորություն Քութաիսի (Վրաստան)՝ օրգանական թափոնների կոմպոստավորման Վրաստանի փորձին ծանոթանալու համար,
- Քութաիսիում և Արարատում կատարվել է աղբի տեսակավորում և իրականացվել թափոնների կոմպոստավորում Արարատի պիլոտային տարածքում,

- Կազմակերպվել են դասընթացներ թիրախ խմբերի համար և հրապարակել թափոնների կառավարման նորարարական տեխնոլոգիաների ուղեցույցներ,
- Իրականացվել են կոշտ թափոնների կառավարման և վերամշակման ոլորտի հանրային իրազեկվածության միջոցառումներ (կրթական պիլոտային ծրագրեր Քութաիսիի, Ունգենիի և Արարատի դպրոցներում, տեղեկատվական քարոզարշավներ, եթեր են հեռարձակվել 4 հեռուստահաղորդումներ):

Հավելյալ տեղեկատվություն

Թափոնների կառավարման նորարարական փորձի ներածություն Վրաստանի, Մոլդովայի և Հայաստանի ընտրված քաղաքներում_(http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-2658.pdf)